

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԷՏԱԲԵՐ

Դ. ՏԱՐԻ

ՀԱՆԼԵՊ, ՄԱՐՏ 21 1931

ԹԻՒ 5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅ ԱԻԵՏ. ԵԿԵՂԵՑԻՆ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԱՄԷՆ ՄԷԿ ԵԿԵՂԵՑԻՒՆ ԱՐԺԷՔՆ ՈՒ ԹԵՐՈՒԹԻՒՆԸ

ՊՈԼՇԷՎԻՔ ՌՈՒՍԻԱ ԵՒ ԿՐՕՆՔԸ

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՐԴԸ ՎԵՐ. Ս. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՄԻՍ ԱԼՏԻՆ ՄԷՅՊԼ ԸՏԼԻ

ՎԵՐ. Ա. ԱՏԱՆԱԼԵԱՆ

1930Ի ԳԻՏԱԿԱՆ ԹԱՌԱՋԱՑՈՒՄՆԵՐԸ

ՏՈՔԹ. Ա. ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ

ՀՈԳԻԻՍ ԾԱՐԱԻԸ

Հ. Յ. ԹԱԿՈՐԵԱՆ

ՔԷՄԲԻ ՀԱՅ ԱԻԵՏ. ԵԿԵՂԵՑԻՆ

ՎԵՐ. Կ. ԲԷԹԷՆՃԵԱՆ

ՄԵՇ ԴԷՄՔԵՐ

ԱԻԵՏ. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

ՍՏԱՑԱՆՔ

Կը հրատարակուի ամիսը երկու անգամ, քաղաքացիական 150 դրոշ սուրի Սուրիոյ համար, և մէկ ու կէս տուար՝ ուրիշ բոլոր երկիրներու համար:

Յօդուածներու բնագիրները չեն ղըրկուիլ էթէ այդ մասին փափաք չյայտնուի յօդուածագիրներու կողմանէ: չհրատարակուող յօդուածներու համար պէտք է ղրկել փոսթի ծախսը:

Յօդուածները պէտք է ղրկուիլ թուղթին մէկ էջին վրայ մեղանով, ղրկւընթեռնի և մաքուր կերպով:

Բաժանորդներէն կը խնդրուի առաջին առթիւ յայտնել իրենց նոր հասցէն երբ փոփոխութեան ենթարկուի ան:

ՁԵՐ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՏՈՒՆԷՔ «ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ»ԻՆ

ԾԱՆՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պատահական ծանուցումներուն համար իւրաքանչիւր տողին գինն է 10 դրշ. սուրիական. վեցամսեայ և աւելի երկարատե ծանուցումներու պայմանները հասկնալու համար դիմել «Նոր Աւետարեւր»ի, B. P. 287, Alep.

ԿԻՒՐԻՒՆԻ ՅՈՒՇ, պարբերաթերթ պատմական, գրական և Ազգային Ա. տարի, թիւ 1, P. O. B. 28, Tremont Sta., N. Y. City, տարեկան բաժնեկրն՝ 1 տուար ամէն տեղի համար:

ԼԻԲՆԱՆ, Ազգային, քաղաքական — գրական անկախ Հայաթիւթ, Place de canons, 9, Rue d'Italie Beyrouth, Liban, տարեկան բաժնեկրն՝ 350 դրոշ սուր. Սուրիոյ համար, 6 տուար արտասահմանի համար:

ԱՐԴԻԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ, գրեց՝ Խ. Ս. Գուրեան, Գահիրէ:

ՃՐԱԳ և ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻԿ, հրատարակութիւն Նիւ Եօրքի Հայ Աւետ. Եկեղեցւոյ:

(Շարունակութիւն խնդրականի)

Կանապէս, որպէսզի տեւական յարաբերութեան մէջ ըլլալով ժողովուրդին հետ կարենայ օրէ օր անոր պէտքերուն հետեւիլ և անոր առաջնորդել:

Թէ ի՞նչ պէտք է ըլլայ ներկայիս Հայ Աւետ. բեմին պատգամը: Հարց մը որ ջերմ աղօթքի եւ լուրջ ուսումնասիրութեան կը կարօտի: Այնպէս կը թուի թէ ներկայիս Հայ Աւետ. բեմին և ժողովուրդին կը պակսի իր խէալին գիտակցութիւնը, որպէսզի անով բռնկի, իր բոլոր ուժերը անոր նուիրէ, և որոշ ճրագրով անյողդող յառաջ քալէ: Այս խէալն է խաչեալ և յարեալ Քրիստոսի միջոցաւ ինկած մարդկութեան փրկութիւնը, և Աստուած Որդիին մարմնացեալ յայտնութիւնը ամէն անհատի մէջ:

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Դ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 21 ՄԱՐՏ 1931

ԹԻԻ 5

ՆԵՐԿԱՅ ՀԱՅ ԿԵԱՆՔԸ

(Շար. եւ Վերջ)

ՀԱՅ ԱԻՅՏ. ԵԿԵՂԵՑԻՆ

Սա վերջին տասը տարիները Հայ Աւետ. Եկեղեցիին համար փորձի և քնննութեան շրջան մը եղած են: Թուրքիոյ Հայ Աւետ. համայնքը, ինչպէս բոլոր Հայութիւնը, զրեթէ ջախջախուած դուրս եկաւ Պատերազմի շրջանէն: Հայ Աւետարանականներու թիւը նուազած է աւելի քան 50 աւ հարիւր համեմատութեամբ, այնպէս որ անոնց թիւը այսօր Կովկասահայաստանէն դուրս, 60000էն իջած է 30000ի, որուն զրեթէ մէկ երրորդը կը գտնուի Սուրիոյ և Լիբանանի մէջ: Պատերազմէն վերջը եւ մանաւանդ Կիլիկիոյ պարպումէն հտքը շատ մը օտար բարեկամներ և Հայեր յռուեալ են Հայ Աւետ. Եկեղեցիին ապագային համար: Բայց այսօր իրողութիւնը բոլորովին տարբեր կերպարանք մը կը ներկայացնէ: Այսօր բացի Կ. Պոլսոյ, նախկին Բիւթանական Ռիւթեան անդամ եկեղեցիներէն եւ Մ. Նահանգաց Արեւելեան և Արեւմտեան 40 եկեղեցիներէն, Ֆրանսայի, Յունաստանի, մանաւանդ Սուրիոյ և Լիբանանի (աւելի լաւ պիտի ըլլար կոչել Մերձաւոր Արեւելքի) Աւետ. եկեղեցիները կազմած են ուրոյն միութիւններ իրենց նախակրթարաններով, Կ. Դպրոցներով, երիտասարդական կազմակերպութիւններով: Հայ Աւետարանականները ունին չորս հայտառ թրքերէն և հինգ հայերէն պարբերաթերթեր, որոնք՝ թէպէտ մեծ մասամբ պաշտօնական հանգա-

մանք մը չունին, սակայն ահագին ծառայութիւն կը մատուցանեն իրենց պատգամներովը: Նոյնպէս Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութեան գոյաւումը և շարունակումը նախախընամական պէտք է նկատել, իր անգնահատելի բարոյական և նիւթական աջակցութեամբը ան մեծ դեր խաղաց իրարմէ հեռու և ցրուած Հայ Աւետ. եկեղեցիները իրարու հետ հաղորդակից պահելու մէջ:

Յետպատերազմեան այս տասնամեայ շրջանին միջոցին Հայ Աւետ. Եկեղեցին քննադատութեան և երբեմն յարձակումի ենթարկուած է Հայ Աւետ. անհատներու, Հոգեւոր Եղբայրութեան անդամներուն, Հայ Առաք. Եկեղեցիի, և կեղծ ազգասէրներու կողմանէ: Այս տեղի կամ անտեղի քննադատութիւնները չափով մը օգտակար եղած են Աւետ. Եկեղեցիին համար, որ իրատես աչքով ան տեսնէ իր թերութիւնները, զնահատէ իր արժէքները, արթննայ և զիտակից ջանքերով ինքնամիոյժի: Այս ուղղութեամբ, սակայն, կը խորհինք թէ տակաւին շատ ընկճիքներ կան, որոնցմէ ոմանք կը ներկայացնենք համառօտ կերպով:

Հայ Աւետ. Եկեղեցին պէտք է պաշտօնապէս և որոշ կերպով գծէ իր ուղղութիւնը Հայց. Եկեղեցիին և Հոգեւոր Եղբայրութեան հանդէպ: Ասիկայ ուշաքննել և տատամսիլ պիտի նշանակէ՝

Աւետ. Եկեղեցիին շահերը անտեսել և հետեւաբար զայն տկարացնել: Աւետ. Եկեղեցիին դիրքն է, ինչպէս որ այս սխեմականերուն մէջ կրկնուած է ասկէ առաջ, անվերապահ յարգանք և համակրանք Առաք. Եկեղեցիին հանդէպ, որմէ կ'ականկալուի նոյնը փոխադարձաբար և անոր հետ սիրալիր գործակցութիւն հայ կեանքին բարոյակտն և հոգեոր մակարդակը բարձրացնելու համար: Առանց վարանելու ա'լ պէտք է պաշտօնապէս զրական քայլեր առնել այս մասին:

Երկրորդ, Աւետ. Եկեղեցիին և Հոգեոր Եղբայրութիւնը պէտք են իրարու հանդէպ իրենց դիրքը ճշդել որոշ կերպով: Եղբայրութիւնը իր քննադատական յարձակողական քաղաքականութիւնը որոշ չափով, գոնէ յայտնի կերպով, փոխած է: Եւ յուսալի է որ աւելի համակրալիր և յարգալիր վերաբերում մը ցուցնէ Եկեղեցիին հանդէպ. իսկ Հայ Աւետ. Եկեղեցիին աւելի գնահատալիր ոգիով մը պէտք է մօտենայ անոնց լըսելու ինչ որ ըսել կ'ուզեն: Պէտք է, սակայն, վերջնականապէս որոշուի թէ՛ Հոգեոր Եղբայրութեան Բող. անդամները Հայ Աւետ. Եկեղեցիին մասը կը կազմեն պէտք է Աւետ. Եկեղեցիին կանոններուն հպատակին, իսկ եթէ ուրիշ անունով ուրոյն եկեղեցի մ'են պէտք է ասիկայ պաշտօնապէս յայտարարեն: Քրիստոնէական անկեղծութեան պահանջն է այս: Աւետ. Եկեղեցիին պէտք է այս հարցը ներկայացնէ անոնց և պաշտօնական պատասխան մը ընդունի անոնցմէ: Հայ Աւետ. Ժող. Եկեղեցիին պէտք է վերջապէս յայտնի կերպով գիտնայ թէ որո՞նք են իր անդամները:

Շատ մը Աւետ. հայեր այնպիսի տեղեր և այնպիսի պայմաններու տակ կը գտնուին ուր իրենց համար կարելի չըլլար իբր եկեղեցի կազկապեր պահել:

և կամ ուէ կազմակերպեալ եկեղեցի կամ ժրութեան մը կարելի չըլլար անոնց օգնել: Այսպիսի մէկ պարագային՝ տարբեր յարանուանութեան պատկառող օտար բարեկամներ կամ կազմակերպութիւններ օգնութեան կը հասնին և կ'աշխատին անոնց եկեղեցական պէտքերուն զոհացում տալ, ինչ որ պէտք է երախտագիտութեամբ յիշուի հոս: Բայց կ'ուզենք հոս մատնանշել պարագայ մը, որ արժանի է լուրջ նկատողութեան: Աւետ. Հայերու մէջ գործող տարբեր յարանուանութիւն բարեկամներ և մարմիններ՝ իրենց անդին ծառայութիւնները շարունակելով հանդերձ՝ փափաքելի է որ փոխանակ մեր մէջ նոր եկեղեցի մը կազմակերպելու և այսպէս արդէն փոքր ժողովուրդ մը վերստին կոտորակելու, զայն ազատ ձգեն իրենց պատկանած յարանուանութեան մէջ հաստատ մնալու համար: Աւետարանական շարժումը չտկարացնելու համար անհրաժեշտ է այսպիսի իմաստուն ուղղութեան մը հետեւիլ: Հետեւաբար Հայ Աւետ. Միութիւնը և յիշեալ օտար բարեկամները պէտք է այս մասին համաձայնութեան գան առաջին առիթով:

Հայ Աւետ. Եկեղեցիին համար ամենակենսական հարցերէն մէկն է նոր առաջնորդներ և գործիչներ յառաջ բերել: Աթէնքի Սիուր սոյլ Ռիլիմընը այս մասին անգնահատելի ծառայութիւններ մատուցած է, և յոյս կուտայ մեզի որ աւելին ալ պիտի կրնայ ընել: 14 հայ երիտասարդներ հոն ուսում առնելէ ետքը զանազան մարզերու մէջ արդէն գործի լծուած են Մերձաւոր Արեւելքի մէջ:

Նկատի առնելով որ, Սուրիան է մեծագոյն դաշար, որուն համար այս զըպրոցը գործիչ կը պատրաստէ, շատ յարմար պիտի ըլլար եթէ անոր կարելի ըլլար Սուրիոյ մէջ հաստատուիլ վերջնա-

(Շարք, տես էջ 66-ին տակը բ. սխեմակ)

Ի՞նչ է ԱՄԷՆ ՄԷԿ ԵԿԵՂԵՑԻԻՆ ԱՐԺԷՔԸ ԵՒ ԹԵՐՈՒԹԻՒՆԸ

The Christian World թերթը Ուրին-
չէսթըրի Անկլիգան Եպիսկոպոս Տր.
Ուուտզի «Հաւատքը և Եկեղեցիին Վկա-
յութիւնը այս Սերունդի մէջ» գրու-
թեանէն կ'արտատպէ հետեւեալը:

Իրողութիւնը սա է որ մեծ եկեղեցի-
ներէն ամէն մէկը կեանքի և կարգի մէկ
կողմը պէտք եղածէն աւելի կը շեշտէ
որ բոլոր Մարմին մէկ յատկանիշը պէտք
է ըլլայ, և միւս կողմէն կարեւոր չա-
փով մը ընդհանրական պաղափարակա-
նէն հեռու կը մնայ:

Հոռովմէական Եկեղեցին հեղինակու-
թեան սկզբունքին վրայ, Օրթոտոքս
(Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներ) ե-
կեղեցին վարդապետութեան անփոփո-
խելիութեան վրայ, Մկրտական Եկեղե-
ցին քրիստոնէական անհատապաշտու-
թեան վրայ, Ժողովական Եկեղեցին ան-
ջատ խումբին ինքնավարութեան վրայ,
իսկ Անկլիգան Եկեղեցին պետութեան
հետ մեր կապակցութեան վրայ պէտք
եղածէն աւելի ծանրացած է...: Միւս
կողմէն ամէն մէկ եկեղեցիին պակսած
է յատկութիւն մը որ պէտք է բոլոր
Մարմին պատկանի: Անգլիոյ մէջ ոչ-
Անկլիգան եկեղեցիները այնպիսի ծա-
ռայութիւններ ունին, որոնք թէպէտ
յայտնի կերպով Ս. Հոգիին կողմանէ
օրհնուած և լեցուած են՝ իբր շնորհքի
ազդու միջոցներ, և սակայն հին և (մին-
չ և Ժ. Դար) ընդհանուրէն ճանչցուած
պատմական յաջորդութեան և հօտին
Հայրապետին գաղափարականէն վար կը
մնան: Միւս կողմէն Անկլիգան եկեղե-
ցին յայտնի կերպով թերացած է պահել
Քրիստոսի ընկերութեան հոգեւոր հեղի-
նակութիւնը... և յաճախ ցաւալիօրէն
իրեն պակսած է խանդը, որով Ճան
Ուէսլի (Ժ. Դարու նշանաւոր աւետա-
րանիչը Ծ. խմբ.) և Ս. Պողոս իրարու
կը միանան: Բարեկարգութեան ժամա-

նակ Եկեղեցիին այս հոգեւոր ազատու-
թեան յատկանիշը կորսուած էր արդէն
և Կալվինի եւ ետքի Անկախներուն
վիճակած էր զայն վերստանալ: Նմա-
նապէս հոգեւոր եռանդը Անկլիգան Ե-
կեղեցիին մէջ զրիթէ անհետացած էր
մինչեւ այն ատեն երբ Մեթոտականները
եկան զայն վերահաստատել: Երկու
պարագաներուն մէջ ալ Ուէսլի և Կալ-
վին ճշմարիտ ընդհանրական գաղափա-
րականին համար կը պայքարէին, թէ-
պէտ անոնք իրենց ջանքերը այս բառե-
րով չպիտի նկարագրէին: Արդարեւ
կարծես անխուսափելի էր որ անջատ
մարմինները կազմուէին որպէս զի ճշ-
մարիտ ընդհանրական եկեղեցիին (կա-
թոլիկութեան), այս նշանները անա-
ղարտ պահուէին: Մեր սահմաններուն
մէջ այս հոգեւոր եռանդը աւետարանա-
կաններու միջոցաւ վերստացուած է,
մինչդեռ պատմական յաջորդութեան
յատկանիշը և եկեղեցիի խորհուրդները
յարգող կեանքը եկեղեցիին մէջ վերա-
հաստատուեցաւ Օքսֆորտի շարժումին
միջոցաւ: Ամէն մէկ եկեղեցի ճշմարտու-
թեան մը վկայած է, չմոռնալ յիշել նա-
եւ երկրեան եկեղեցիին վկայութիւնը՝
որ կը բողոքէ Ս. Գրքի հակառակ եղող
եպիսկոպոսութեան, և Ներքին Լոյսի
մասին Գուէյքըրներու վկայութիւնը:
Ժամանակը եկած է հարցնելու թէ ինչ-
պէ՞ս ընդհանրականութեան այս լաւա-
զոյն կէտերը կրնան Մէկ, Սուրբ, Ընդ-
հանրական, Առաքելական Եկեղեցիին
մէջ միացուիլ: Նախ երկու պայման-
ներ պէտք է լրացուին: Առաջին՝ լա-
րաքանչիւր եկեղեցիին մէջ իրական ա-
պաշխարութիւն մը այն մեղքերուն հա-
մար՝ որ բաժանումը յառաջ բերած և
տեւականացուցած են: Երկրորդ՝ ամէն
մէկ եկեղեցիին բոլոր խաւերուն մէջ
խորունկ և ընդհանուր փոփառք մը վե-

ընտանիքի միանալու համար: Ներկայիս այս պայմաններուն ոչ մէկը չի տեսնուիր, բայց եթէ չատ մը տեղեր խմբակները իրենք զիրենք ազօթքի և ուսումնասիրութեան նուիրեն՝ Ս. Հոգին պիտի ստեղծէ զանոնք:

Թիւն մը: Ոչ մէկ գիրք, որչափ ալ ազտոտ ըլլայ, Սբ. Գիրքի չափ փնաս հասցուցած է:»

Եւ ասոր արդիւնքն է Ռուսիոյ ներկայ քառասուն վիճակը:

ԵՆԹԱԴՐԷ ՈՐ...

ՊՈԼՇԷՎԻՔ ԲՈՒՍԻԱ ԵՒ ԿՐՕՆՔԸ

Պոլշէվիք Ռուսիա կրօնյի դէմ պատերազմ յայտարարած է. անոր նպատակը կը թուի թէ մի քանի տարւան միջոցին կրօնքը Ռուսիոյ մէջ բնաջինջ ընել է, և այս ուղղութեամբ անիկայ կ'աշխատի աշխարհիս ամէն կողմը: Կարգ մը երկիրներու մէջ Ռուսիոյ թեւադրութեամբ անաստուածներու ընկերութիւններ կազմուած են, և հակակրօն պայքարը սուր հանգամանք առած է: Հայաստանի մէջ այսպիսի ընկերութիւն մը իր վերջին տարեկան ժողովին մէջ խոստովանած է որ անցեալ մէկ տարուան միջոցին իր աշխատութիւնը ունէ արդիւնք չէ տուած: Այս շարժումը ջինաստանի մէջ ալ յաջողութիւն չէ գրտած: Այս շարժումը, սակայն, խթաններու դէմ աքացել է, և ասոր իբր արդիւնքը ըլլալով, քրիստոնէութիւնը դուրս պիտի գոյ աւելի՝ կենդանի և աւելի՝ մաքուր: Հետեւեալ հատուածները «Լիթւրգիի Տայճէսթ»էն քաղելով կը ներկայացնենք:

«Պիպպոզնիք» թերթը, Մոսկովայի Անաստուածներու պաշտօնաթերթը, գրած է. «Հիմա ոչ թէ քարոզիչներ այլ խոզեր պէտք է յառաջ բերենք... խոզեր և հողի պարարտացուցիչները օգտակար են, բայց քարոզիչները, Աստուծոյ մը հաւատքը մեր գործին կը վնասեն: Ոչ մէկ աւազակներու խումբ այնքան վնասակար է, որքան քարոզիչներու և անոնց հետեւորդներու կազմակերպու-

«Ինչ պիտի շահի կասկածողը» կը հարցնէ զրոյ մը՝ Թիւն Ջըրջմէն թերթին մէջ, «Երբ ենթադրենք որ Յիսուս զիցաբանական էակ մըն է, Քրիստոնէութիւնը առասպել մըն է, և եկեղեցին պարզապէս մանկական հեքիաթի մը վրայ հիմնուած է»: Եւ կը պատասխանէ. «Այս գաղափարակները,—զիցաբանութիւնը, առասպելը, պարիկներու հեքիաթը—մեծագոյն միակ ոյժը եղած է քաղաքակրթութեան 2,000 տարիներու միջոցին:»

«Այս միակ գաղափարը կեանքը փոխած է. երեւակայութեան արդիւնքը եզոյ այս վէպը մեզի տուած է ատելութեան փոխարէն սէր, հեշտասիրութեան փոխարէն մաքրութիւն, վրահատութեան փոխարէն յոյս, յոռետեսութեան փոխարէն լաւատեսութիւն, մարդատեցութեան խոխարէն եղբայրութիւն:

«Այսպիսի գաղափար մը մեծապէս գործնական է. այսպիսի հէքեաթ մը ոյժով լեցուն ըլլալու երեւոյթն ունի, այսպիսի առասպել մը հրաշալիօրէն փոխակերպիչ է:»

«Ուրեմն այս զիցաբանութիւնը որքան ատեն որ այս բոլորը մեզի կուտայ թող ան իր գոյութիւնը շարունակէ:»

«Տասն և ինը դարերու մեծագոյն միտքերը, ամենամաքուր կրիները, ամենագորաւոր մարդիկը և պարզ մանուկները այս գաղափարականին հաւատացած են, անոնք որ ջերմեռանդօրէն հաւատացած են և իբր ճշմարտութիւն մը զանիկա ապրած են՝ սըր-

բուժեան մէջ գեղեցիկ բոլոր բաներուն զրինակը եղած են»:

«Կոնփուկիոս անշուշտ ապրեցաւ: Հարցու՛ր անոր կրօնական գրութեան թէ որո՞նք են բարձրագոյն ոյժերը: Ան կը պատասխանէ. «Մենք բարձրագոյն ոյժերը չենք գիտեր»: Ասիկա տեսակ մը չգիտականութիւն մ'է, որ միշտ տուած է Զինաստանը»:

«Պուտտա անշուշտ ապրեցաւ: Հարցու՛ր Պուտտայականութեան թէ որո՞նք են բարձրագոյն ոյժերը. ան կը պատասխանէ. «Տիեզերքը բարձրագոյն ոյժն է»: Ասիկա կրօնական համառուածութիւն է, և արտադրած է Հընդկաստանը»:

Մուհամմէտ անկասկած ապրեցաւ: Հարցու՛ր Մահմետականութեան թէ որո՞նք են բարձրագոյն ոյժերը, և պիտի պատասխանէ. «Օրէնքն է,—փոխուելու ընդունակութիւնէն զուրկ օրէնքն է—մեծագոյն ոյժը»: Այս տեսակ մը կրօնական ճակատագրապաշտութիւն (fatalism) է, որ արտադրած է Թուրքիան»:

Բայց Քրիստոնէութիւնը կ'ըսէ. «Աստուած մարդուն մէջ՝ բարձրագոյն ոյժն է»: Այս կրնայ յայտնութիւն կոչուիլ: Դուն կոչէ՛ դիցաբանութիւն, ինչ որ կ'ուզես: Յիսուսը, Աստուծոյ Մեծ Յայտնիչը, զիցաբանական էակ կոչէ: Բայց այսպէս ըսելով իրողութիւնները մի՛ անտեսիր: Քրիստոնէութիւնը յառաջ բերած է Անգլիան և Ամերիկան:

Եթէ Յիսուս, զիցաբանական էակը, կրնայ քաղաքակրթութիւնը իր պաշտնականէտին հասցնել, —եւ մարդիկ, ազգեր, չեն կրնար երբեք իրենց կրօնքներէն աւելի վեր բարձրանալ— եթէ Գալիլիացիի առասպելը կրնայ մարդոց մէջ հօգի դնել, Սօդոսը Պօղոսի եւ Կեփասը Պետրոսի փոխել, թող բոլորը պատուեն այս Առասպելը, բոլորը ծափողջունեն այս զիցաբանական էակը»:

ԿԱԹ

Գրեց՝ ՏՈՒԹ. Ֆ. ՅՈՎՆԱՆԵԱՆ

Մեր կեանքին ամէն շրջանին մէջ իբր սնունդ կաթի պէտք ունինք, սակայն մանկութեան և ծերութեան միջոցին անիկայ կենսական պէտք մըն է մեղի համար: Կաթը այնպիսի կերակուր մ'է որ այլազան անուցիչ նիւթեր կը պարունակէ. քիմիական բարդ բաղադրութիւն մ'ունի և շատ զօրաւոր ըլլալուն բաղդատմամբ դերամարս է: Մանուկներ և չափահասներ երկար առտեն միայն կաթ խմելով կրնան ապրիլ: Անիկա մարմինն պէտք եղած բոլոր գործարանական և մետաղային նիւթերը կը պարունակէ:

Մարդու և կենդանիներու կաթերուն մէջ թէպէտ հիմնական նմանութիւն մը կայ, և սակայն անոնք իրարմէ կը տարբերին իրենց պարունակած նիւթերու առողջութեան վրայ ունեցած ազդեցութեամբ: Երբ պայմանները կը փոխուին կաթերն ալ կը փոխուին: Եղանակը, կերակուրը, կեանքի տեսակը, կաթ տուած ժամանակին երկարութիւնը, մտային վիճակը՝ կաթի նուրբ բաղադրութեան կ'ազդեն:

Կովու կաթին մէջ հետեւեալ նիւթեր միջին հաշուով սա համեմատութեամբ կը գտնուին. իւղ՝ հարիւրին 4, շաքար 5, միսի նիւթ՝ (proteid) 3.5, մետաղային աղեր՝ աւելի քան 10 և ջուր՝ 87:

Մարդու կաթը թէպէտ ընդհանրապէս կովու կաթէն աւելի իւղ և շաքար բայց նուազ աղերու միսի նիւթ կը պարունակէ: Մարդկային կաթը դարձեալ իր անուցիչ նիւթերու բաղադրութեան մէջ կարգ մը կարեւոր տարբերութիւններ կը ցուցնէ: Վերը յիշուած նիւթերէն զատ 5—6 տեսակ մակարոններ, 3—4 տեսակ կենսամիներ կը պարունակէ, որոնք կեանքի պահպանման և զարգացման համար մեծ ծառայութիւններ

կը մատուցանեն:

Մանուկներ արդէն մօր կաթը, իսկ չափահասներ կովու, այծի և ուրիշ կենդանիներու կաթերը իբր կերակուր կը գործածեն: Գիտութեան համար շատ զգուար հարց մը եղած է թէ ինչպէ՞ս պէտք է կաթ հայթայթել այն մանուկներուն համար, որոնք չկարենալով մօր կաթէն կերպով մը օգտուիլ կ'ստիպուին կովու, այծի կամ ոչխարի կաթը գործածել: Շատ մեծ ջանքեր թափուած են մօր կաթին գրեթէ համանման կենդանական կաթ յառաջ բերել: Յաւալի պարագայ մըն է գտնել թէ քաղաքակիրթ երկիրներու մէջ, մանաւանդ մեծ քաղաքներու մէջ, այն կիները՝ որոնք չեն կրնար կամ չեն ուզեր իրենց մանուկները դիւցնել՝ ամէն տարի թիւով կ'աւելնան: Մանուկները կաթով սնուցանել շատ կարեւոր և կենսական խնդիր մ'է որուն մասին խօսիլը ուրիշ առիթի մը յետաձգելով ներկայ յօդուածովս կ'ուզեմ գրել ընդհանուրին գործածած կաթին մասին:

Կաթը իբր կերակուր զանազան ձեւերով կը գործածուի: Զոր օրինակ, խտացեալ կաթ, չորցած և փոշիացած կաթ, մածուն, պանիր ևայլն: Ասոնց մէջ լաւագոյնը և ամէնէն սննդարուրը անխարդախ և թարմ կաթն է, որուն միւսները չեն կրնար հաւասարել: Քաղաքի բնակչութեան համար անխարդախ կաթ ձեռք ձգել կենսական խնդիր մը եղած է: Գիւղացիներն ու ագարակապանները ինչպէս որ աղբիւրէն մաքուր և թարմ ջուր կ'առնեն, իրենց այծերէն, ոչխարներէն կամ կովերէն ալ ամէն օր թարմ կաթ կը կթեն: Անոնց համար կաթը մտահոգիչ հարց մը չէ: Բուն դժուարութիւնը, տաք երկիրներու մէջ, մեծ քաղաքներու բնակչութեանց պէտք եղած անխարդախ կաթը հայթայթելն է: Կաթի մէջ շատ խարդախութիւն կը կատարեն: Կաթը այն-

պիսի կերակուր մ'է որ շուտով կ'աւրուի, և աւրուելով գէշ և վնասակար արդիւնքներու պատճառ կ'ըլլայ: Ինչպէս որ մաքուր կաթը շատ լաւ կերակուր մ'է, աւրուած կաթն ալ ընդհակառակը կրնայ մահացու թոյն մ'ըլլալ: Շատ դիւրին և գործնական եղած չէ կաթի մէջ կատարուած խարդախութիւններու չափը որոշել: Կաթը ժամանակ մը աւրուելէ զերծ պահելու համար գլխաւոր երեք միջոցներ կան:

Առաջին՝ շատ պաղ տեղ մը պահել զայն: Ասիկա թէպէտ շատ լաւ միջոց մըն է սակայն շատերու համար գործնական չէ կրցած ըլլալ:

Երկրորդ՝ կաթի մէջ կարգ մը դեղեր խառնելով զայն պահել: Այս միջոցը երեք պէտք չէ գործածուի:

Երրորդ կերպն է կաթը եռացնել, որուն թեր և դժմ յիշելու արժանի կարգ մը կէտեր կան: Պարզ, անխարդախ եռչեփած կաթը՝ խմելու համար ամենայարմարն է: Մանուկները իրենց մայրերուն չեփած կաթը կը ծծեն, որ ունէ քիմիական և կենսական փոփոխութեան հնթարկուած չէ: Բայց ցաւալի է յայտնել թէ մարդերուս համար գրեթէ անկարելի եղած է բառին ճիշտ առումով օգտուիլ և մանրէներէ զերծ կաթ ձեռք ձգել:

(Շարունակելի)

ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՒ ՊԱՏՈՒՀԱՆԸ

Աղքատ աշակերտ մը իր վարպետին նետած անպէտ ապակիի կտորներէն մայր եկեղեցիի պատուհանի մը փեղկը շինեց, որ լմնալէն վերջ բոլորին հիացումին առարկայ եղաւ: Իր վարպետին շինածը մերժուեցաւ և իրը անոր տեղ դրուեցաւ: Քրիստոս ալ, մեծ ճարտարապետը, ինկածներէն շինեց նոր աշխարհ մը:

ԱՍՏՈՒԱԾԱՐԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Գրեց՝ ՎԵՐ. Ս. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ամէն ոք այնպէս զիտէր թէ նշանաւոր տառեր մատանին անխառն ոսկի է։ Բայց ի՞նչ պէտք է ընել երբ ումանք կ'ըսեն թէ անիկայ բողոքովին պղինձէ շինուած է։ Արդեօք ընելիք բան մը չկայ, մանաւանդ երբ կը տեսնենք որ այս մասին խօսողներուն թիւը կ'աւելնայ և անոր ոսկի ըլլալուն հաւատացողները կը նուագին, և երբ այս պարագան ալ խօսեցեալ երիտասարդներու սիրոյ յարաբերութեան կը մնասէ։ Բնականաբար այս մատանին ոսկերիչին կը տանինք, որ զայն փորձաքարի զարնելով կը յայտնէ թէ 22 աստիճան ոսկի է ան։ Այս խօսքը չհասկցողներուն կը բացատրէ և կ'ըսէ. «Ամենամաքուր ոսկին 24 աստիճան կ'ըլլայ, բայց ոչ մէկ մատանի 24 աստիճան ոսկիէ կը շինուի, քանզի անխառն ոսկին շատ կակուղ ըլլալով չուտ կը ծռի. հետեւաբար կ'ստիպուին քանոր մէջ արծաթի և պղինձի նման մետաղներ խառնել որ ան աւելի տոկուն ըլլայ։» Ոսկերիչին այս բացատրութեան համեմատ «անխառն ոսկի է» ըսողները սխալած են. քանզի երկու աստիճան ոսկիի տեղ ստորին տեսակէ մետաղներ դրուած են։ Միւս կողմէն «բողոքովին պղինձ է» ըսողները խիստ շատ սխալած են. քանզի գտնուեցաւ որ անոր մէջ պղինձի տեղ 22 աստիճան ոսկի կայ։ Ուրեմն ոսկերիչի բացատրական խօսքերը երկու կողմերուն ալ կարծիքը կը բարեփոխէ և կը շտկէ, և մատանին ՈՍԿԻ կոչելու մէջ համաձայնութեան կը բերէ զանոնք։

Ահա չենք սխալիր երբ այս իմաստով ըսենք՝ թէ Ս. Գիրքի և անոր մասին խօսուածներուն արժէքը հասկնալու համար յարմարագոյն տեղն է իր անունին հաւատարիմ մնացող Աստուծաւ

բանութիւնը։ Այն շատ մը մեծ նիւթերը գործնք եկեղեցիի մէջ գիրութեամբ կ'արտասանենք և կ'ընդունինք՝ Աստուածաբանականի մէջ մտքի հալոցին մէջ կը գտուին, Ս. Գիրքի մէջ ներշնչուի չափը, Աստուծոյ գոյութիւնը, մարդուն ծագումը, Քրիստոսի իսկութիւնը, մեղքի նշանակութիւնը, քաւութիւն, անմահութիւն, — ասոնք և ասոնց նման նիւթեր մանրակրկիտ քննութեան կ'ենթարկուին։ Ամէնէն նշանաւոր հաւատացեալներու և անհաւատներու թեր ու դէմ կարծիքները ամենայնպէս, ամէնէն անկեղծ, և ամէնէն տրամաբանական կերպով կը բացատրուին։ Երիտասարդին կարծիքները ու համոզումները ուժգին կերպով կը ցնցուին։ Անոր միտքն ու հոգին այս նիւթերով այնքան կ'զբաղին որ դասարանի մէջ, սեղանատունը, խօսակցութեան պահուն, առանձինն խորհրդածելու ատեն, նոյն իսկ երազներուն մէջ չի կրնար անոնցմէ ազատիլ։ Շատ դժուար կացութեան մէջ կը գտնուի այն երիտասարդը՝ որուն աստուածաբանութիւնը հոգեւոր փորձառութեան նման ամուր հիմի մը վրայ չէ շինուած։ Ժողովուրդներու մէջ կը գտնուին կարգ մը անձեք, որոնք հակառակ իրենց հոգեւորութեան՝ վարդապետութիւնը կեանքէն զերադաս կը համարեն, և երիտասարդին համբերել չեն կրնար սորովի։ Ահա ասոնք երբ իրենց մէջ կ'ունենան նոր ուսումնաւարտ այսպիսի մէկը, կարգ մը նուրբ հարցերու մասին քնննութեան կ'ենթարկեն զայն՝ օգտուելով անոր պարզամտութենէն, և երբ ան իր կարգացած բայց չիւրացուցած տհաս կարծիքները եւ զաղափարները կ'արտայայտէ՝ գրեթէ անհաստատութեան վը-

ճիւղը իր ճակատը փակցուած կը գտնեն։ Ո՛չ այդ խեղճ երկտառարդը ո՛չ ալ անոր հարցաքննիչները գիտցան թէ Աստուածաբանական դպրոցին վկայականը տրուած է ոչ թէ զիսցած ըլլալուն համար այլ կարենալ սորվելուն համար։ Այդ թուղթը իբր մուտքի տոմս տրուած է որպէսզի գիտութեան զուգէն ներս ընդունուի ան, որ իր ուսումնասիրութեան օրէն սկսեալ պիտի շարունակէ ուսումնասիրել, եւ «Երկնային Թագաւորութեան մասին ուսանող և իր գանձէն հին եւ նոր արժէքներ արտադրող քարտուղարի մը» պիտի նմանի։ Իսկ այս՝ ժամանակի կը կարօտէր որ անոր զլացուեցաւ։

Ուրեմն ի՞նչ պէտք է ընել։ Միջոցներէն մէկն է «Աստուածաբանական վարժարանները» փակել։ Մինչ յառաջդիմութեան արդիւնքը եղող փոփոխութիւնը կեանքի ամէն շրջանակին մէջ կ'ողջունուի, կրօնական մարզին մէջ կը քննադատուի և կ'արհամարհուի։ Բայց երբ ասիկա ընենք ո՞վ պիտի գահացնէ նոր սերունդին քննական միտքը։ Քարոզիչը՝ իր երկտառարդութիւնը կորսնցուցած ժողովուրդին տակաւին քանի՞ տարի կրնայ քարոզել այն պատգամը որ պէտք է եկեղեցիին կողմանէ տրուի։ Բուսիոյ նայէ՛ և խրատուէ։ Ի՞նչ է անոր այսօրուան թշուառութեան գաղտնիքը։ Անիկայ փոխանակ յաւիտենական ճշմարտութիւնները արդիական տարազներով բացատրելու և վարդապետութիւնը կեանքի փոխակերպելու, յամառօրէն շարունակեց հին բացատրութեանց մաշած անիւը դարձնելու, և ասոր արդիւնքը ըլլալով իր կրօնական շէնքը իր գլխուն փլաւ։ Ուէ եկեղեցի մը, որ մշտանորոգ հոգեւոր փորձառութիւնէ զուրկ է և ժամանակի մտաւորական զարգացումին և զիտական բացատրութեանց անտեղեակ է, պիտի կորսնցնէ իր երկտառարդութիւնը և թափուր նստարաններու պահապանը պիտի ըլլայ, ինչպէս որ շատեր արդէն այսպէս եղած են։

Մեր կարծիքին համեմատ ասոր զարմանը երկու է։ Նախ քարոզիչն ու ժողովուրդը պէտք են «աստուածաբանական գիտութիւն» բացատրութեան երկու եզրերն ալ մէկտեղ ընդունին։ Անոր մէկ եզրը կը կազմեն Աստուած և աստուածային բաներ, իսկ միւսը՝ գիտութիւն։

Ճշմարտութիւնները գիտական կերպով ուսումնասիրել ժամանակիս ամենաիրաւացի և միակ պահանջն է։ Գիտական ուսումնասիրութիւնը հաւատքին չի հակադրուիր այլ կ'օժանդակէ։ Ս. Կրքին մէջ գատապարտուած իմաստութիւնը սատանայական իմաստութիւնն է որ յաւիտենական սկզբունքներու դէմ կը պայքարի։ Կարելի չէ համար մը մէջբերել որ պարտաւէ կամ արհամարհէ խելքի գործածումը. քանզի մարդ խելքը ստատանայէ չստացաւ։ Անիկա Աստուծոյ շնորհքն է, եւ կը փափաքի որ մարդ զայն գործածէ։ Մեզի կը յանձնարարուի «խորհրդիւնէ որ արդարութիւննով, ինչ որ մաքրութիւնով ինչ որ բարի համբաւով է ...» (Փիլ. 4, 8), «մենք թէ ի՞նչ է Տէրոջը հաճելին» (Յովհ. 5, 10), «մտքին հոգիովը նորոգուիլ» (Յովհ. 4, 23), և այլն։ Ոչ մէկ կրօնք մտքին բոլոր կարողութեանց համար այնքան ընդարձակ ասպարէզ չէ կրցած բանաւորքան քրիստոնէութիւնը։ Արդ՝ որչա՞փ մեծ յանցանք մըն է մեր կրօնքին այս պատիւը անտեսել։ Եթէ հաւատքը մեր խելքը պիտի կողոպտէ, մեզ տպուշ պիտի դարձնէ և ապա պիտի գործէ, ոչ թէ օրհնութիւն մը այլ պատուհաս մըն է ան։ Եթէ ան կեղծ հաւատք չըլլար՝ մտքին ասպարէզ պիտի տար ուսումնասիրելու համար։ Ինչպէս որ հայր մը որ իր տղուն հարցումներ կ'ուզէ, անոր զիտածովը ուրախ կ'ըլլայ, չգիտցածը կը սորվեցնէ, այնպէս

ալ հաւատքը՝ միտքը կը քաջալերէ եւ յառաջ կը մղէ, անոր համար կարեւորն անոր ընել կուտայ, անոր կարողութենէն վեր եղողը ինք կը լրացնէ: Հինգ հազար հոգիները անօթի կ'սպասէին անգամ մը, ահա այն ատեն էր որ Յիսուս իր աշակերտներուն մտքին զիմելով հարցուց. «Ուսկի՞ց հաց ծախու առնենք որ ատոնք ուտեն» (Յովհ. 6. 5): Այս կերպով Ան աշակերտներուն իմացական ոյժին գործելուն առիթ տուաւ: Անոնք սկսան խորհիլ. մէկը առաջարկեց ժողովուրդը ցրուել մօտակայ ագարակներէն և գիւղերէն հաց գնելու, երկրորդ մը հարցուց թէ երթանք և 200 դահեկանի հաց գնե՞նք (Մր. 6. 36, 37): Անդիէն Փիլիպպոս ըսաւ որ երկու հարիւր դահեկանի հաց ատոնց չի բաւեր (Յովհ. 6. 7): Վերջապէս Անդրէասի միտքը կրցաւ պզտիկ պատասխան մը գտնել այս մեծ պէտքը գոհացնելու համար: Ան ըսաւ. «Հոս պատանի մը կայ, որ հինգ վարեղէն հաց ու երկու ձուկ ունի» (Յովհ. 6. 9): Յիսուս տեսաւ որ անոնք կատարեալ անկեղծութեամբ իրենց միտքը դործածեցին և կարելի չաւագոյն պատասխանը գտան: Ահա Յիսուս մտքի յայ գիւտը իբր աւագ գործածելով պակասած լրացուց և մեծ հրաշք մը կատարեց: Ծոյլ միտքը իրաւունք չունի հրաշք ակնկալելու: Արդ՝ միտքդ անկախօրէն գործածէ եւ պակասած հաւատքով լրացուր:

Մեր առաջարկելիք երկրորդ դարմանն է ժողովուրդը աստուածաբանա-

կան հարցերուն տեղեակ պահել: Իսկ այս գործը մեր կրթական առաջնորդներէն կ'ակնկալենք: Երեւակալէ՛ մարդ մը որ շատ փոքր մարմին մ'ունի, այս օրուան եկեղեցին ահա ասոր կը նմանի: Բարոյիչը գոլէճական և աստուածաբանական բարձրագոյն ուսումը նոր մեթոտով ստանայ, և ապա զայն թերթերու և զրքերու ընթերցումով միշտ թարմ պահէ, իսկ ժողովուրդը հապիւ առնոր փշուրներովը սնանի, ի՞նչ մեծ անհամեմատութիւն է այս: Ինչպէս որ քարոզիչը աստուածաբանական դպրոցը կը զրկենք՝ ժողովուրդն ալ պէտք է հոն զրկել: Եւ եթէ չզրկենք աստուածաբանական դպրոցը պէտք է ժողովուրդին բերենք որ Ս. գիրքը միասին ուսումնասիրեն, որուն թեր ու գէժ բոլոր ըստածները ժողովուրդն ալ գիտնայ, ուսումնասիրէ և անձնական որոշման յանգի: Ժողովուրդը թերեւս քարոզիչը պիտի գերազանցէ: Ուրախ ենք որ մեր ժողովուրդներուն մէջ մեզմէ աւելի հոգեւոր տեսիլքի տէր, մտացի, ազնիւ և բարոյական քաջութեան տէր անհատներ կան: Ուրեմն՝ մեր տեսածը ցուցնելու և ղեկավարութիւնները միատեղ լուծելու և արդիւնքը վայելելու յօժարինք: Այն ատեն միասնաբար աւելի պիտի ջանագիր ըլլանք գործնական հոգեւոր և շինիչ կեանք ապրելու: Բանգի պիտի տեսնուի որ Ս. Գիրքը հակառակ իր մարդկային տարրերուն «ոսկի է և շատ փորձուած ոսկի է աւելի ցանկալի է» (Սաղ. 19, 10):

ՄԻՍ ԱԼՏԻՆ ՄԷՅՊԸԼ ԸՏԼԻ, 14 ՏԱՐԵԿԱՆ ՔԱՐՈՉԻԶ ՄԸ

Գրեց՝ ՎԵՐ. Ա. ԱՏԱՆԱԼԵԱՆ

Ամերիկան տարօրինակ երկիր մըն է. 14 տարեկան աղջիկի, մանուկ քարոզիչի մը մօտիկ կ'ընեն, ատո՞ր ալ ետեւէն

կ'երթան, ինչո՞ւ: Այո՛, կ'երթան անոր ետեւէն որ քարոզած է հարիւր հազարաւորներու, հմայած է բոլոր երկի-

րը, իր համբաւը տարածուած է ամէն տեղ: Այս ալ աղջիկ մը, թող ըլլայ, ինչու չէ:

Իրաւ, 12-14 տարեկան աղջիկ մը կրնա՞յ քարոզել, այգչափ մեծ բազմութիւնները հետաքրքրելու չափ:

Հետաքրքրութեան համար անգամ մը կ'երթան... սակայն այս օրիորդին անգամ մը մօտիկ ընողը կրկին ու կըրկին երթալ կ'ուզէ:

Ֆիլատէլֆիոյ մեծ «օտիդորիոմ»ը, լսարանական սրահը, վարձած էին Շիգակոյէ եկած համբաւաւոր մեծ քարոզիչի մը համար: Մարդը ամիս մը պիտի կենար. 1-2 շաբաթ քարոզեց, ժողովուրդը չկրցաւ գրաւել, ձգեց հազընաց յուսահատ:

Միւնոյն մեծ սրահը վարձած էին այս պլատիկ օրիորդին քարոզութեան համար: Աստուած ինչ հրաշքներ կը գործէ, Սուրբ Հոգին մանուկներու բերնով ալ կը խօսի: Այդ մեծ սրահը լեցուն էր, այս պլատիկ օրիորդին քարոզած շաբաթները միւս համբաւաւոր մեծ աւետարանիչէն շատ աւելի գրաւիչ մեծ գործ տեսաւ: Այո՛, տո՛ր ահանատես նշանք մենք:

Այս 14 տարեկան օրիորդ ֆարգիսը (այժմ 17 տարեկան է), իր ճերմակ հագուստով, անուշ հրեշտակաման երեւոյթ մ'ունի, քաղցր ձայնով օժտուած է, սրտաբոխ աղօթքը քեզ կը վերացնէ:

Քարոզութիւնը պարզ է.—Ս. Գիրքը զոց պիտէ, որուն համարները իրարու ետեւէ կը յիշէ, ու մէկ կողմէ ալ անմիջապէս Ս. Գիրքը կը բանայ ու կը կարդայ: Խօսքերը ոչ մանկական, ոչ ալ թեթեւաւորիկ. ոչ կը կակազէ ոչ ալ խօսքի ու գաղափարի մասին կը նեղուի: Անոր բերնէն աղբիւրի պէս կը վազեն Աստուծոյ խօսքերը: Երբեմն հրեշտակային յոյսով յանկարծ կ'սկսի երգել, հետեւ ալ թմբուկ զարնելով: Ինչ հրապուրիչ, ազգեցիկ երաժշտութիւն: Այս

ալ քարոզելու ատենը ոչ թուղթի կը նայի ու ոչ նօթի, ժամ մը ժողովուրդը իր բերնէն կախուած կը պահէ: Երբ ժողովուրդը ապաշխարութեան կը հրաւիրէ, ու ապաշխարողները ամպիոնին առջեւ ծնրադրելու կը կանչէ մարդիկ, մեծեր, չափահասներ, ինչպէս նաեւ մանուկներ կ'երթան այդ պլատիկ աղջնակին ձեռքը կը բռնեն, ու անոր առջեւ կը ծնրադրեն:

Այս աղջիկը ոչ ուսում ունի և ոչ մարդկային պատրաստութիւն, այլ անիկա հոգիին դպրոցը ուսած է, ու կը ուսանի ամէն օր: Ուրիշ բան չէ այլ միայն Աստուծոյ հրաշքն է: Ո՞վ կ'ըսէ թէ հրաշքի դարը անցած է, այս հրաշք է:

Շատ քարոզիչներ անոր Ս. Գրային հմտութեան հիացած ու անոր առջև իրենք ամչցած են, շատերու աչքերէն արցունքներ կը գլտորուէին... չափազանցութիւն չէ:

Այս ուրիշ բան չէ այլ «ան է որ Բովիլ Մարգարէին ձեռքով ըսուեցաւ. հոգիէս ամէն մարմնի վրայ պիտի թափեմ, ու ձեր տղաքն ու ձեր աղջիկները պիտի մարգարէանան ու ձեր երիտասարդները տեսիլքներ պիտի տեսնեն...» Գործք. 2. 16-17:

ՊենՏէկՈՍՏէ մօտ է: Այո՛:

Այս ալ թէ 17 տարեկան օրիորդ, սակայն տարբեր տեսակ հսկայ ֆարգիս մըն է: Աստուած իբր միջոց կը գործածէ թէ այրերը և թէ կիները:

Միջոցը բան մը չ'ըներ, բայց ամէն բան միջոցի մէջ կը կատարուի: Ժամանակը բան մը չ'ըներ, բայց ամէն բան ժամանակի մէջ կը կատարուի: Նմանապէս ազատութիւնը բան մը չ'ըներ. այն ալ, միջոցի եւ ժամանակի նման, պայման մըն է որուն տակ ամէն բան կը կատարուի:

Charles F. Thwing

1930 թ ԳԻՏԱԿԱՆ ՅԱՌԱՋԱՑՈՒՄՆԵՐԸ

ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ (Շար.)

Քաղեց՝ ՏՈՔԹ. Ա. ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ

Կապոյտ հազէ տառապող մանուկներու հազը զգալի կերպով սկսած է նուազիլ եթերի ներարկումներով:

Մասնաւոր աշխատութեամբ մանրէ մը մեկուսացուցաւ, որուն բուն հարբուխի պատճառը ըլլալ կը կարծուի:

Տոքթ. Ֆոք ինֆլուէնզայի մանրէն գտաւ:

Կարգ մը տեղեկագիրներու նայելով մարդուս այլ և այլ գործարաններու խանգարման պատճառը մտային խանգարման կը վերագրուի:

Մաքրուս մէջ հիւանդացած գործարանի մը զինք քլորայտի (Zinc chloride) գործածութեամբ, աւելի քիմիական միջոցներով քան վիրաբուժական ձեւերով, բուժումի կարելիութիւնը հաստատեց Տոքթ. Ա. Հ. Մայս:

Նիւ Ճէրսիի հապալուսի (բոյս) ճախիններու օրգանական հողերու մէջ գտնուած պասիլներէն պատրաստուած նոր հիւթ մը՝ որոշ կերպով սկսած է յարձակիլ թոքատապի (Pneumonia) դուրսի պատեանին վրայ, յառաջ բերելով արգելական (Prophylactic) և բուժիչ հրաշալի հետեւանքներ:

Սէյնդ Մէյրի հիւանդանոցէն Տոքթ. Ֆլէմինկ բէնսիլլին (pencillium) շինուած հիւթի մը միջոցաւ յաջողած է թարախ արտադրող մանրէները և կեղծմաշկի մանրէները փճացնել:

Տոքթ. Պերնդոն հաստատեց թէ հասարակ բորբոս մը (Mold) պատճառն է շնչարգելութեան (Asthma), այս ինք տարի զմանալու ոչ ոք ունի:

Շատերուս ծանօթ, պատերազմի միջոցին թիֆուսի փոխանցման պատճառը՝ ոչիւն զատ ուրիշ միջատներ փոխան-

ցելու միջոցներ ըլլալին ստուգուեցաւ:

Շաքարի չափազանց գործածութիւնը պղտիկներու ախտանքը կը փճացընէ, որքան ալ ախտայի յատուկ դեղեր կանոնաւոր կերպով գործածուին:

Ուղեղին մէջ յառաջ եկած ուռեցքները ճշդելու համար, զլուխին ետեւէն երկու կողմերէն հաւասար քանակութեամբ հեղուկ քաշելով անոր տեղ օդ տալէ վերջ Բ. ճառագայթներու ենթարկելով ցարդ բժշկութեան հանելուկ դարձած գաղտնիքները սկսած են երեւան գալ:

Մանշուած (Iodized) սնուցիչ իւղերու մղանութիւն (emulsion) ներերականին կիրարկումը յաջող փայծաղի (տալագ) Բ. ճառագայթի լուսանկարներ սկսած է տալ:

Նոր Բ. ճառագայթներու շարժապատկերի մեքենան՝ յաջող կերպով երկամուտն քննելու շրջանակին դաշնականոր շարժումները կրցած է ցոյց տալ: Ռաքֆէլըր Հաստատութեան մէջ բժշկական շարժանկարի միջոցաւ մարդուս արեան 3000 անգամ մեծցուած ճերմակ բջիջները ցուցադրուեցան որոնց շուրջ կ'երևնար բջիջէն աւելի խոշոր ալիքոտ թաղանթ մը:

Արեան շրջանի մէջ՝ «ասիթիլին» կազի ներմուծմամբ ստուգուեցաւ որ միջակ սիրտ մը իւրաքանչիւր ժամուան մէջ 60 կալօն արիւն դուրս կուտայ զէպի երակները:

Միլպանք Մէմօրիլը Ֆոնտը 50,000 յատկացուց առողջապահական նպատակներու համար, Զինու ներքերը թին Հոփէն ի համար, 400,000 բնակչութիւնը բժիշկ մը անգամ չունի եղեր:

ՀՈԳԻՒՍ ԾԱՐԱԽԸ

Պասուք մը ունի հոգիս աղցաւոր,
 Ձոր աշխարհային խոհեր անհամար
 Կ'օրրեն, կը պատրեն յուսով մ'անցաւոր՝
 Խոր վէրքի կոտաանք տալով միշտ յամառ:

* *

Սրբապղծեցի վեհ սրբանուէր
 Սիրոյ տաճարը իմ նուիրական,
 Հուր կրից բոյժ մ'է կեանքս, այլապաւեր
 Աւերակ մ'եւեթ պակուցի՜չ այնքա՛ն:

Իմ խղճմտանքիս տնթեղեցի խայթ
 — Լուռ արձագանգը Աստուծոյ ձայնին —
 Մարեցի հաւատն — սրտիս ճառագայթ —
 Որ կ'առաջնորդէր Մարմնացեալ Բանին:

* *

Դեռ հոգիս ունի հզօր մի բաղձանք
 Ինչպէս եղջերուն ջուրերուն հոսող.
 Ձերթ ծերունիին կարօտն զգայ ցանկ
 Անբաւեցիին մարին մէջ ծնող:

Հանգստի իմաստուն բարի մոգերուն
 Մութ հորիվոնին վրայ մշտապատ
 Ծագէ՛, Տէ՛ր, Ծնորհացդ Աստղը շողշողուն
 Իմ պասքածարաւ հոգւոյս անապատ:

Լառնախա (Կիպրոս)

Հ. Յ. ՅԱԿՈԲԵԱՆ

Վերջերս գործադրութեան դրուած ավերդին նորագիւտ թմրեցուցիչ գեղը, յաջողութեամբ գործածուիլ սկսած է աչքի գործողութեանց համար:

Կրկին անդին ի նոր բաղադրութիւն մը ունէ վէրք կրնայ եօթը օր (Sterile) այսինքն առանց թարախոտեղու մաքուր պահել: Գործողութեանց պահուն կարի համար գործածուած մետաքս, լար (Cat gut) այս բաղադրութեան մէջ թաթ-խելով հզօր կերպով կ'ընդիմանան թա-

րախ արտադող մանրէներու դէմ: ա-սիկայ 1930 ի մարդկութեան ծառայող լուսագոյն բարիքներէն մէկն է:

Փայլուն կամ յղկուած բրինձի մէջ լայցօ լիւիքիլն կոչուած թունաւոր հիւթ մը գտնուած ըլլալը ճարտէն հաղորդուեցաւ:

Եթէ պեկեզօ փոփսպօ փոշին սըր-բուի թունաւոր բաղեղէն յառաջ եկած բորբոքած մասերուն վրայ, անմիջա-կան բուժում յառաջ կուգայ:

ՍՍՏՈՒԿԵՑԻՆԵՐ ԵՒ ՓԱՐԻՍԵՑԻՆԵՐ

Թարգմ.՝ Յ. Մ. ՀԱԼԷՊԼԵԱՆ

Իրիկուան մօտ, տաճարին սրբարանին և զրաի գաւթին մէջտեղ, նոր սաւարկուած սրահներէն մէկուն մէջ Հրեաներու բարձրագոյն ատեանը ժողով գումարած է։ Հոս, Սանէտրինի ժողովին մէջ, Էն պատկառելի քահանաներ անթող գրաւած են, բոլորը ծերունաւոր, մի քանին բոլորովին աւեր են։ Առաջին աթոռը գրաւած է Յովսէփ Կայիափա քահանայապետը, որ իբր ազգին պետը ժողովին կը նախագահէ։ Պիզատոս երբ իբր Հրեաստանի կուսակալ Պաղեստին եկաւ, Կայիափա քահանայապետ էր, զոր իր պաշտօնին մէջ հաստատելէ զատ ուրիշ բան մը չկրցաւ ընել Հռովմէական կուսակալը։ Այս ժողովին գումարման համար կուսակալին արտօնութիւնը անհրաժեշտ էր. բայց ասկէ զատ, որ պարզ ձեականութենէ աւելի բան մը չէր, այս գերագոյն ժողովը իր նիստերուն մէջ կատարեալ ազատութիւն կը վայելէր։ Ասիկա որ թէ՛ կրօնական և թէ՛ աշխարհական իշխանութիւնը կը ներկայացնէր, թէ՛ դատաստանական ատեան և թէ՛ ծերակոյտ էր։ Անոր սրշումները անբեկանելի են։ Երկրին մէջ և արտառահման ապրող բոլոր Հրեաները, է՛ն հասարակ և է՛ն հեղինակաւոր անձերը, իշխաններ և քահանաներ անհրաժեշտօրէն պէտք է այս մարմինն հնազանդին։ Ժողովին կողմանէ տրուած մահուան վճիռներ միայն պէտք է Հռովմէական կուսակալին կողմէ վաւերացուին գործադրութեան գրուելու համար։ Ժողովին անդամները իրենց կուսակցութեանց կողմանէ ընտրուած են, և սակայն իրականին մէջ պաշտօնը ժառանգականօրէն հօրմէն զաւկին կը փոխանցուի, և նախագահութեան դիրքը տակաւին մի քանի

հարիւր տարիներ զատաւոր Հիւլէի սերունդին իրաւունքը պիտի մնայ։ Պաշտօնի այս ժառանգականութիւնը և անդամներուն տարիքը այս կազմակերպութեան խիստ պահպանողական գոյն մը կուտան։ Այս պատճառաւ երբ Հռովմայեցիք անոր ազդեցութիւնը օգտագործելու պէտք տեսնեն՝ կ'աշխատին որ անոր մէջ մտնեն այնպիսի հարուստներ, որոնք հանգիստ կեանքը կը սիրեն և հետեւաբար իրենց պաշտօններուն մէջ աւելի լայնախոհ են։

Սաղակեցիք այսպիսի մարդիկ էին, որոնք թիւով թէպէտ քիչ բայց ազդեցութիւնը մեծ՝ խմբակ մը կը կազմէին։ Ասոնք բարձր կարգէ անհատներ էին որոնք չէին ուզեր իրենց վայելած հանգիստ և հաճելի կեանքը վաւերել՝ յաղթական կառավարութեան գէմ ըմբոստ դիրքով կամ անպէտ կրօնական նախանձայնութեան պատճառաւ։ Սաղակեցիք կ'ըսեն որ Մովսէսի օրէնքը առաջին օրը եղածին չափ յարգելի է, և «Մինք զայն իր այդ դիրքին մէջ ալ պիտի պահենք. բայց հոքը տրուած մեկնութիւնները և յետագայ դարերու միջոցին յաւելեալ գաղափարները երբեք յարաբերութիւն չունին մարգարէին խօսքին հետ, այս պատճառաւ անոնք մեր վրայ ուէ իշխանութիւն մը չունին։ Ո՞ր գրուած է որ հարստութիւն չինել, արծաթէ պնակներու մէջէն ուտել, Աստուծոյ շնորհած հաճոյքները վայելիլ մեղք է։ Յիւրաքի Հռովմայեցիք պիղծ են, բայց ոչ մէկ բան մեզ կ'արգիլէ Հռովմայեցոց բերած բարի բաները վայելիլէ եթէ պատուիրուած ծովները պէտք եղած չափով պահենք»

«Դատ որոշ է որ հասարակ ժողովուրդը չպիտի կրնայ այս նրբութիւնն»

ըը հասկնալ, և լաւ է որ չհասկնան: Ուրիմն անոնց երկրային վարձատրութիւն խոստացէք, — այսինքն մարդարէններու քսած երկար կեանքը, արդարի կեանքը, հանդերձեալ կեանքի վախերէն և յոյսերէն ազատ կեանք մը: Անոնց սորվեցուցէք որ անմահութիւնը իրենց սերունդներուն կեանքին մէջ կ'ապահովուի, անոնց յանձնարարեցէք կարելի եղածին չափ բազմաճառ որ իրենց օրհնութիւնները անվերջ ըլլան:»

Դիւրաւեաց կեանքի յանձնուած, իրենց վիճակէն գոհ և պարծենկոտ, վարդապետական հարցերու մէջ թոյլատու, բայց աշխարհիկ խնդիրներու մէջ շատ խիստ այս մարդոց քով Սանէտրինի ժողովին մէջ գիրք գրաւած են իրենց հակառակօրդները — փարիսեցիներ — որոնք նիհարակազմ, խոժոռ ըսուելու չափ լուրջ, երեսները փոսացած և աչքերը մոլեռանդութեան կայծերով փայլուն մարդեր են: Ասոնց անունը կը նշանակէ «մաքուր եղողներ» կամ «զատուածներ»: Ասոնք կը կազմեն մեծ ազգայնական կուսակցութիւնը, որուն անդամներուն թիւը 6000 ի կը հասնի: Տեսականին և գործնականին մէջ զուտ ռամկավարներ են, օրէնքի ամէն մէկ մեկնութեան հմուտ են: Ասոնց միւս մասը երկաթագործի, կաշեգործի, տակտագործի, փայտահատի, կօշկակարի զաւակները կամ հղբայրներն են, և իրենց կուսակցութեան կանոններէն մէկուն համեմատ գոնէ օրին մէկ երրորդը արհեստով կամ ձեռական աշխատանքով պիտի անցնեն:

Այսու հանդերձ ասիկա զանոնք չ'արգիլեր ճիշդ «Մաքրակրօն»ի մը նախանձաւորութեամբ հեռու մնալէ կեանքի այն հասարակ խաւէն ուսկից իրենք ծագում առած են, և թէպէտ իրենց հակառակօրդ Սաղուկեցիներու նման ոյժի, նիւթական հաճոյքի և զրամի ետեւէ չեն իյնար, բայց օրէնքի մասին իրենց ու-

նեցած խոր հմտութեան համար կը պարծենան, շարունակ օրէնքէն կը ճառեն, զայն կը մեկնեն: Անոնք մտաւորական հպարտութեամբ լեցուած իրենց եղբայրները, գիւղացիները և արհեստաւորները կ'արհամարհեն՝ Ս. Գիրքը չկարենալ կարդալուն, օրէնքը չգործադրելուն և զայն շիտակ մեկնելու անկարող ըլլալուն համար:

Ամէն մէկ գոհի Տէրոջ հոգիին մէջ յառաջ բերած ազդեցութիւնը չափելու անոնց կերպերը, ցուցամուկան երկար աղօթքներն ու կուրծք ծեծելը, հրապարակներու վրայ կամ տաճարի մէջ մարդոց ներկայութեան իրենց տուած նըպաստը կամ ողորմութիւնը, պէտք եղածէն շատ աւելի անոնց ծոմապահութիւնն ու լուացումները, ամէն բան կատարելին ուրիշներու ցուցնելու համար անոնց կատարած ջանքերը, արգիլեալ արարքները չընելու մասին անոնց տուած կարեւորութիւնը՝ պատճառ կ'ըլլային որ ժողովուրդը իրենց վրայ հիանայ և իրենց օրինակին հետեւի:

Ասոնց համար ոչ թէ շարժառիթները այլ գործերը արժէք ունին: Այնպէս որ տաճարին գեղեցիկ նուէրներ տուող մէկը կրնայ իր ծեր ծնողներուն ապրուստը հոգալէն ազատ մնալ: Դասերու մէջ խորհրդակցութեան նիւթերը մեղք, խիղճ, կամ շնութիւն չէին, այլ սա հարցերը թէ շարաթ օրը մէկը քանիքայլ կրնայ ճամբորդել, կամ որոշ յանձանքներու իրր պատիժ տրուած հարուածներու թիւը 40 էն 39 ի կարելի՞ է իջնցնել: Տարիներով խորհրդակցութեան նիւթ եղած է սա խնդիրը թէ Պատեքի երկրորդ օրը եթէ շարաթի հանդիպի ընծայարելու ելիք հասկերը կրնա՞ն չընծուիլ: Մեծ հարց եղած էր թէ խիստ կարեւոր խնդրի մը համար տաճարի վըրայ եղած երգումը թէ տաճարին ոսկիին վրայ եղածը աւելի ընդունելի է:

Կամ թէ կին մը՝ որ ուր մանուկ մը կը ծնի, եօթը օր թէ 14 օր պիղծ կ'ըլլայ։ Եւ կամ թէ Սուրբ Սրբոցի մէջ այրուելիք խոռնկը քահանայապետին գալէն առաջ թէ ետքը պէտք է այրել։ Բայց առանց կասկածելու իրենց դպրոցներուն մէջ կը սորվեցնէին թէ այլազգիներու գրքերէն ուէ մէկն իսկ կարդացողը յաւիտեանական կեանքէն կը զրկուի։

Վարդապետութեան և Ս. Գրքի մասին մեկնութիւնները այս կերպով մինչ կ'սպառնային ճշմարիտ բարոյականութիւնը խեղդել, միւս կողմէն Փարիսեցիներուն կեանքը երկրին մէջ միշտ վառ պահուող քաղաքական յոյսերուն նոր կայծեր կուտար։ Անոնք շարունակ Մովսէսի, փրկութեան, Աստուծոյ թագաւորութեան, այլազգիները արհամարհելու մասին կը խօսէին ժողովուրդին, և ինչպէս իրենց հայրերը մերժած էին Հէրովդէոսին հնազանդելու երզումնէն անցեալի մէջ, իրենք ալ հիմայ կը մերժէին հպատակիլ Հռոմէացիներուն։

ԵՄԻՆ ԼՈՒՏՎԻԿ

Ծն. Թրգզ. — Էմիլ Լուտփիկ Գերմանացի Հրեայ գրող մըն է, որուն «Որդի Մարդոյ» անուն գիրքը — մեր Տէրոջ կենսագրութիւնը — շատ մը լեզուներու թարգմանուած է։ Ասկէ զատ Նափուէտնի, Մ. Անճէլոյի, և Լինգլենի կենսագրութիւններն ալ գրած է։ Անոր երկերը ամէն տեղ մեծ հաճոյքով կը կարդացուին։ «Որդի Մարդոյ» գիրքը առաջին անգամ 1928ին հրատարակուած է։ Մեր Տէրոջ ժամանակը ապրող Սուրբ Կեցիկներու և Փարիսեցիներու մասին Երբայեցիի մը իբր պատմաբան զբոսածները մեր բոլորին համար շատ հետաքրքրական է, և յուսալով որ ասիկա պիտի օգնէ անոնց «խմորին» խկութիւնը հասկնալու և այս կերպով մեզ պիտի մղէ «Անոնց խմորէն զգուշացէք» ըսող մեր Տէրոջ հնազանդելու, Սպաներէնէ թարգմանելով վերի հատուածը ներկայացուցինք։

ՔԷՄԻԻ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ, ՀԱԼԷՊ

Գրեց՝ ՎԵՐ. Կ. ՔԷԹԵՆՃԵԱՆ

Հալէպի քէմբին մէջ եկեղեցական և կրթական գործերը 1923 ի գարունը թէպէտ սկսած էին ընթացք առնել, և սակայն պաշտօնական կազմակերպութիւնը ասկէ ճիշդ եօթը տարի առաջ կատարուած է։ Այս շրջանին միջոցին շատ մը փոփոխութիւններ տեղի ունեցած են։

Կառավարական տոմարի մէջ այս ժողովուրդին պատկանող անհատներու արձանագրուած թիւը 2500 է աւելի է։ Անցեալ եօթը տարիներու միջոցին այս թիւին աւելնալուն և պակսելուն մասին որոշ բան մը չենք կրնար ըսել, բայց կրնանք կարգ մը փոփոխութիւնները յայտնել հետեւեալ կերպով։

1923—1931 Յունվարի միջոցին 137 պսակ և 141 յուղարկաւորութիւններ կատարուած են. 281 անձեր անդամ ընդունուած են, որոնցմէ 18 հատը իրենց յաւիտեանական հանգիստը մտած և 39 հատը ուրիշ երկրներ և տեղեր զաղթած են։ Այս կերպով մեր 57 անդամներուն ներկայութենէն և ընկերակցութիւնէն զրկուած ենք։ Երբ սորվելու և սորվեցընելու համար դուրսը գտնուող մեր ուսանողներն ու ուսուցիչները և աւետարանչուհիներն ալ հաշուենք կը տեսնենք որ մեր եկեղեցիին անդամներէն և գործիչներէն 70 հատը մեզմէ բաժնուած են։ Յաւալի է որ ասոնց տեղերը զբաւող շատ քիչ անձեր ունեցած ենք։ Այսպիսի կորուստի մը ազդեցութիւնը թէպէտ ամէնէն աւելի աղօթաժողովներու մէջ զգալի եղած է, բայց ան մեր հոգեւոր պաշտօններուն որակէն աւելի քանակին մէջ յայտնի եղած է։

Ամէն տարի պատահող մահերու և շարունակող վաղթումի բաղդատմամբ

և դպրոցի և եկեղեցիի ծախքերուն աւելնալուն հակառակ՝ մեր հոգեւոր տուրքերը չեն նուազած այլ աւելցած են: Հետեւեալ յայտնի իրողութիւնները կը բաւեն ասիկայ հաստատելու:

1930 ի Ապրիլէն սկսեալ այս ժողովուրդը զբաղած է ապագային եկեղեցական չէնք մ'ունենալու ծրագրով, զոր իրականացնելու համար սկսած է գործնական քայլեր առնել: Ասոր իբր արդիւնքը անիկայ յաջողած է 100 օսմ. ոսկիի պէս գումար մը գոյացնել: Ահա այս կերպով փափաքուած եկեղեցական չէնքին համար գետին մը կարենալ ծախու առնելու յոյսը գործնականապէս զօրացաւ:

Այս ժողովուրդին վիճակը գիացողներուն համար այս ձեռնարկը և անոր արդիւնքը պզտիկ հրաշք մը չեն: Մանաւանդ հիացումի արժանի է ազգատ և կարօտ այրիկներուն՝ ոչ թէ իրենց աւելցուքէն՝ այլ բոլոր ապրուստին այս նպատակին զոհաբերելը, հաւեւելով Աւետարանի այրի կնոջ օրինակին:

Մեր դպրոցական պիւսճեկն մեջ տեսնուած յառադիրմութիւնը: Անցեալ տարիներու միջոցին կարգ մը հեռաբնակ բարեկամներու օգնութեանց շնորհիւ մեր եկեղեցիին դպրոցներուն մէջ կրթուած են ոււելի քան 300 երկսեռ աշակերտներ, որոնք դպրոցիս շրջանը աւարտելէ վերջ իրենց ուսումը լրացնելու համար բարձրագոյն վարժարաններ գացած են և կամ ալ իրենց ապրուստը հոգալու համար արհեստի մտած են:

Մեր լեզուն տկար կը գտնենք մեր շնորհակալութիւնը և երախտագիտական զգացումը յայտնելու մեր բարեկամներուն, որոնք այս մասին մեզի օգնած են ու տակաւին կ'օգնեն: Այս համակրանքն ու օգնութիւնները տարիէ տարի պակսած են և հաւանական է որ բոլորովին դադրին: Ուրեմն այս պակասը լրացնելու և իրենց մանուկներուն կրթ-

թութեան համար իրենց լաւագոյնը ընելու համար պէտք էր ծնողները վարժեցնել և քաջալերել, և ուրախ ենք որ ունեցած ենք մէկը որ կրցած է ասիկայ կատարել:

Պատ. Արամ Հատիտեանի յարատեւութիւնն ու համբերութիւնը, մանուկներու ծնողներուն հետ ունեցած յարաբերութիւնն ու վերաբերումը մեր հասոյթին վրայ զգալի յաւելումի մը պատճառ եղած են և ապագային համար ալ աւելի յոյսեր կը ներշնչեն: Պէտք չէ անձերու և ժողովուրդին համար չնչին ծառայութիւն մը նկատել տարիներէ լվեր իրենց պաւակներուն կրթութեան համար տալու և խորհելու չվարժուած անհատները խորհիլ տալ և համոզել և տալու վարժեցնել: Մեր հոռատա յոյսը ու է որ մօտաւոր ապագային մէջ չտաք՝ հակառակ ամէն զօռարութեան՝ իրենց պաւակներուն համար արտաքին նպաստը չպիտի ընդունին և զայն իրենց մէ աւելի կարօտ անհատներու թողելու ազնուութիւնը պիտի ունենան:

Եկեղեցական պաշտօններու մեջ փոխօրինակութիւն: Վերջին 8-9 տարիներէ իվեր կիրակի առաւոտան պաշտօնը բեմէն տրուած դասի ձեռք կը կատարուէր, որ քարոզի և խրատականի ոճը կը կրէր: Բայց 1930 ի Գեղտեմբերէն սկսեալ այս պաշտօնի ժամանակը և ձեւը փոխուեցաւ. այնպէս որ ներկայիս դասը կը կատարուի կէսօրէ ետքը իրենց տարիքներուն համեմատ կազմուած կարգերու մէջ և զատ ուսուցչներու կողմանէ:

Այս հաճելի կերպին հիւրընկալումին և շարունակումին համար ելախտապարտ ենք Վեր. Ս. Ս. Մանուկեանի և Ագիլիյէի Հայ Աւետ. Եկեղեցիին պատկանող անձնուէր ուսուցիչ և ուսուցչուհիներու: Այս կերպը, որ սպառնալից է առաջ մեր եկեղեցիներէն գնահատուած և օգտակար արգիւնքներ տուած էր,

15-16 տարիներէ ի վեր անկիրարկելի մնացած և գրեթէ մոռացութեան դատապարտուած էր: Բայց ա՛լ յուսալի է որ Հայ Առաք. և Աւետ. Եկեղեցիներուն մէջ ան կը շարունակուի:

Պէտք է սա կէտն ալ յիշել թէ առայժմ այս փոխութիւնը նւթապէս և բարոյապէս շահաւոր չի թուիր. և սակայն չինք կասկածիր որ այս ծառայութեան մէջ գտնուող մեր ուսուցիչներուն և աշակերտներուն ջանքերը մեր ապագային համար փայլուն և շահաւոր գետին մը պիտի պատրաստեն: Եւ այս կերպը տակաւին չհիւրընկալողներուն կը յանձնարարենք որ օր առաջ զայն կիրարկելու սկսին, և երբեք չենք կասկածիր որ մօտաւոր ապագայի մէջ անոր օգտա-

կար պտուղները պիտի վայելին:

Արտաքին օգնութիւնները մեզ ոտքի վրայ կանգնեցնելու համար են, որպէսզի այս կերպով ինքզինքնիս գըտնենք և ինքնապահ ըլլանք: Եթէ մեր կարելին չընենք և ամէն բան ուրիշներէն ակնկալենք քիչ ետքը իբրեկեղեցի և ժողովուրդ բարոյապէս սնանկացած պիտի ըլլանք, և ասոր արդիւնքն է մահ: Ուրեմն աշխատի՛նք, մեր զբոսը տանք և և կեղեցիներուն մեր տալիք զրամը ուրիշ աղբււրներէն հայթայթելու չզիջանինք, եւ այդ զրամը մեզմէ աւելի կարօտ եկեղեցիներու եւ զարոցներու թողունք: Եւ այն ատեն տալու առաւելութիւնն ու օրհնութիւնները պիտի վայելինք:

ՄԵԾ ԴԷՄՔԵՐ

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԳԵՐՄԱՐԴՐ

Այս բացատրութեամբ կ'որակէ Մ. Կանտին Թիւ Լիքլորեի Տայնէք թերթը, որ կը կարդանք, «... Ան սովորաբար մէջքէն կապուած կտաւ կը հագնի և նոյն իսկ փոխարքային կ'այցելէ տունը բանուած լաթէ կարուած հագուստով: Ան գեղձանիկի մը տխրածակն ունի: Իր ինն ամսոյ բանտարկուեալ միջոցին մանրուած հում եգիպտացորենով, չամիչով և կաթի թանձրացեալ մասով սնանկացաւ: Եթէ իր առողջութիւնը կը ներէ, ան կը նախընտրէ աստղերու տակ, մերկ գետնի վրայ պառկել: Անոր ամենասիրելի ժամանակն է հին փայտէ ջահրակով մանել: Մինչ Միծն Բրիտանիա կ'ապաստէ Կանտին կը մտնէ: «Մանիլը խորհուրդ մըն է» կ'ըսէ ան: Ամէն Հնդկի գիւղացին պէտք է մանէ: Եւ ջահրակով է որ աղքատներու է՛ն աղքատին հետ շփման մէջ կը գտնուիմ, իսկ անոնց միջոցա-

ալ Աստուծոյ հետ»:

Հնդկի փիլիսոփայական կաճառին նախագահը Փրոֆ. Ա. Ր. Ուատիա, որ Քէյմպրիճէ ուսումնաւարտ է, Կանտին մասին կը վկայէ թէ ան ուսուցիչ մըն է՝ որ դասաւորութիւնէ փշուրներ քաղելէ չի գոհանար, բայց որ կրնայ դիմակալել կեանքը, և կրնայ խանդավառել և ուսուցանել: «Կանտի իր ուսուցումներուն մէջ կը միացնէ Արեւելքի փիլիսոփայութիւնը Արեւմտեանին հետ» կ'ըսէ Փրոֆ. Ր., որուն կարծիքին համեմատ Հնդկի փիլիսոփայութիւնը «Կեանքի ճամբան» գտնելու կը ջանայ, մինչդեռ Եւրոպական փիլիսոփայութիւնը ինքզինքը կը յատկացնէ «Կեանքի անաչառ քննադատութեան»:

Արդ այս երկու հիմնական գաղափարները պէտք է միանան, կը պնդէ ան: «Մ. Կանտին, Հնդկներու Հնդկին» մտքին արտադրութիւնն ալ այս է: Ուստի ան կը յայտնէ որ Կանտինի համար մտածում և գործողութիւն հո-

մանիչ են: Անոր կարծիքին համեմատ «Գաղափար մը որ արդար, շիտակ գործողութիւն մը չ'արտադրեր աւելի գէշ է քան տնօգուտը»: Այս փրոֆ. Ը կը խորհի որ Կանտի շնորհաստանի վրայ մատուցած մեծագոյն ծառայութիւնը վախի՛ն գէ՛մ պայքարիլը և խնոր յաղթելը և ուրիշներուն ալ նոյն կերպով ընել սորվեցնելն է:

ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏ ՄԸ ՈՐ ՀԱՄԱԼՍՍԱՐԱՆԻ ՄԸ ՆԱԽԱԳԱՀԸ Կ'ԸԼԼԱՅ

Ուղիթըր Ուիլհելմը կը կոչուի այս մարդը որ 1930ին Միսուրի Համալսարանին Նախագահ ընտրուեցաւ:

Ուիլհելմը 13 տարեկան էր երբ դըպրոցը ձգեց և գործնական կեանքը մշտաւ: Անիկայ տակաւին դպրոցին մէջ 11 տարեկան եղած ատեն սպարան կ'երթար աշխատելու, անիկայ այս արհեստին սիրահարն էր, իր բոլոր պարտականութիւնները կը տպէր: Դպրոցը ձգելէ վերջ սպարանի մէջ շարունակեց աշխատիլ՝ միևնոյն ատեն կարգալով անյազօրէն և զրելով: 18 տարեկան էր երբ խմբագիր մը եղած էր արդէն: Շատ չ'անցած ծանօթ և փնտռուած հրատարակագիր մը եղաւ: 1908ին Միսուրի Համալսարանին մէջ նորարաց հրատարակողութեան դպրոցին ուսուցչապետ եղաւ, 1907ին և 1917ին եղած նախագահական պաշտօնի հրաւերները մերժած էր համեստօրէն:

Ուիլհելմը հակառակ շատ կարճ դպրոցական կրթութիւն առած ըլլալուն հիմա կը կոչուի «Միսուրիի ամէնէն աւելի սիրուած» և «ամէնէն լաւ կրթուած մարդը»:

ՌՈՒՍԻՈՅ ՄԷՋ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Կրթութիւնն ու ուսումը որո՞նց առանձնաշնորհումն է Ռուսիոյ մէջ, ճարտարագիտական և թիւնիքական դա-

սընթացքներու հետեոյ աշակերտներու հարիւրին 70ը գործաւորներու զաւակներն են, 15ը՝ գիւղացիներու, 15ը մասնագէտներու և խորհրդային պաշտօնեաներու զաւակները: Ուսանողուհիներու համեմատութիւնն է հետեւալը. — տնտեսագիտական դասընթացքներու հետեոյ աշակերտներու հարիւրին 35ը, երկրագործութեան հետեոյներուն հարիւրին 30ը, ճարտարագիտութեան հետեոյներուն հարիւրին 20ը: Քահանաներու, եկեղեցականներու, վաճառականներու, «Գուլագ»ներու և նախկին ակնուականներու զաւակները բացարձակապէս արգիւտած են բարձր ուսում ստանալէ Ռուսիոյ մէջ:

ՀԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ

ԵՒ

ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆԸ

Վերջերս Տր. Ֆրիտ Ֆրէմըստորֆի կատարած պեղումները երեւան հանքին թէ Գերմանիոյ Գոլոնիա քաղաքին առաջին քրիստոնեաները՝ Հռովմէական տիրապետութեան շրջանին մեռելը թաղած ատեն հեթանոսական խնճոյք մը կը կատարէին: Փորուած կարգ մը քրիստոնէական գերեզմաններու յատակը, քարէ դամբանէն դուրս գտնուած շիշերու, զաւաթներու, պնակներու հաւաքածոն կը ցուցնէ թէ այդ տեղի հին քրիստոնեաները գերեզմանին քով խնճոյք մը կը սարքէին բաժին մ'ալ մեռելի հանելով:

Գտնուած հեթանոսական սովորութեան ուրիշ հետքի մը համեմատ այս նախկին քրիստոնեաները զապաղը գերեզմանի մէջ չիջեցուցած հաւ մը կը զօհէր, որ վերջը գերեզմանի յատակը կը զրուէր լայնաշեղք և կարճ դանակով մը և խեցիէ պնակով մը:

ԱՒԵՏ. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՔԻՍԱՊԻ ՄԷՋ Դպրոցի ուսուցիչներուն մէջ պատահած խնդրի մը պատճառաւ Աւետ. Ժողովուրդին և դպրոցի և եկեղեցիի հոգաբարձութեանց միջև դժուարութիւն մը ծագած էր, որ քիչ վերջը ծանրակշիռ հանգամանք մը ստացած էր: Պէյրթէն վեր. Հ.Հ. Րիկզ և Հալէպէն վեր. Կ. Յարութիւնեան այս դժուարութիւնը լուծելու համար, փետր. 28ին Քէսապ կը հասնին և բարեկամական եւ ամենահաճելի կերպով յաջողին լուծում մը տալ հինգ օր աշխատելէ ետքը: Եւ գործերը կ'սկսին իրենց սովորական ընթացքով յառաջանալ:

Եկեղեցիին հոգեւոր վիճակը յուսալից փուլի մը մէջ մտած է: Կիրակնօրեայ պաշտօններուն ատեն սրահը ունկնդիրներով կը լեցուի. աղօթած ժողովներուն մասնակցողներուն թիւը աւելցած և հոգեւոր եռանդ մը յառաջ եկած է: 20-30 այրեր, մեծ մասամբ հրիտասարդ, գիւմաճ ըրած են եկեղեցիին անդամակցութիւնը համար: Մշակէս կը թուի թէ յիշեալ դժուարութիւնը ժողովուրդը նախանձայն զործունէութեան մղած է եկեղեցիին համար: Վեր. և Տիկ. Ե. Քատունի ծառայութիւնները ընդհանուրին կողմէ կը գնահատուին:

Յանձնախումբս՝ Քէսապի մէջ անցուցած երկու Կիրակիներուն՝ Քէսապի մէջ եւ չըջալիս գիւղերը քարոզած է: Վեր. Հ. Հ. Րիկզ գիւղերը այցելած է: Մարտ 4 ին Յանձնախումբս Հալէպ կը վերադառնայ Քէսապի եւ չըջալիս քիւն մասին աւելի յուսալից տրամադրութեամբ:

Վեր. Կ. Յ. Յարութիւնեան ցաւալի արկած մը անցուցած է, Քէսապէն Քէօրքիւնէ ճամբորդելու ատեն. իր հեծած ջորին սայթալքելով ինկած է և իր ալ

իյնալուն պատճառ եղած է: Ասոր հրարդիւնքը Պատուելիին մարմինն մի քանի տեղերը վնասուած են, որոնք ուրախ ենք որ մտահոգիչ վիճակի մէջ չեն: (Եւ արդէն ապաքինած է:)

Ուրախութեամբ կը հրատարակենք նաեւ սա լուրը թէ Քէօրքիւնէի Հայ Աւետ. Ժողովուրդին մէջ, մանաւանդ կիներու մէջ, յուսալից հոգեւոր արթնութիւն մը սկսած է:

Վեր. Ե. քատունի ևս իր եկեղեցիին մասին Մարտ 13 թուակիր միջի ղրկած է թղթակցութիւն մը, որմէ կը քաղենք հետեւեալ հատուածը միայն՝ չկրկնելու համար յիշուած կէտերը. «Երէկ իրիկուն Կիրակնօրեայ Դպրոցին համար զեղեցիկ ընկերային հաւաքոյթ մ'ունեցանք: Ներկայիս 200 ի չափ երկսեռ մանուկներ կը յաճախեն Կ. Դպրոցին, որ կը գործեն 10-12 վարժուհիներ Պր. Ասատուր Սատագեանի առաջնորդութեան տակ: Յակոբ-Տիգրան (Վեր. Քատունի զաւակը) ալ կ'օգնէ անոնց՝ երգիհանը նուագելով, երգեր ոտրվեցնելով և այլն: ... Տիկին Քատունի կ'աշխատի երգիչ խումբ մը մարդկու, որ երբեմն երգեցողութիւններով կ'օգնէ պաշտամունքը աւելի հրապուրիչ ընելու...»:

ՍԵՂԱՆԻԿԻ Ե. Ք. Զանից Ընկերակցութեան վարած ժողովրդային լսաւանդ ճոխ յայտարարով հանդէս մը սարքած է տօնելու համար Վարդանանցը: Երգչախումբը զեղեցիկ երգեցողութիւններ ըրած է: Պր. Տ. Երամեան՝ ընկերակցութեամբ Տիկ. Տոքթ. Մ. Պապիկեանի՝ մեներգած է. արտասանութիւններ կատարած են Պ. Պ. Յ. Քէչիկեան, և Զ. Զանկըրեան, Օրք. Ա. Սարեան և Ն. Մանաշեան, կտորներ նուագած են Պ. Պ. Լ. Քարաճեան, Յ. Ոսկանեան, և Տիկ. Ա. Տոքթ. Մ. Պապիկեան. բոնասուսած են Տիար Թովմաս Պոյաճեան և Պատ. Կ. Պարաճեան վեր առնելով օրուան նշանակութիւնը: Հանդէսը փա-

կած է Արթ. Տ. Ս. քհնյ. Հալէպլեան: Խուռն բազմութիւնը, որուն մէկ մասը տեղի անձկութեան պատճառաւ ետ գացած է, գոհ տպաւորութեամբ բաժնուած է սրահէն:

ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ Պր. Աւագ Աւագեան, Սփռչ ալ ռիշինընի ուսումնաւարաներէն, կը գործէ օգնելով վեր. Ն. Սարեանի, առաջնորդելով Կ. Դպրոցը և վարելով Աւետ. Եկեղեցիի դպրոցին տնօրէնութեան պաշտօնը: Կ. Դպրոցին մէջ կան 125 աշակերտներ և 5 ուսուցիչ-ուսուցչուհիներ: Ասկէ երեք ամիս առաջ կազմակերպուած է Ե. Բ. Զանից ընկերութիւնը 15 անգամներով: Նախակրթարանին մէջ Պր. Աւագեանէ զատ կը պաշտօնավարեն 6 երկսեռ ուսուցիչներ, երկսեռ ուսանողութեան թիւն է 250:

Աթէնքի «սփռչ ալ ռիշինընի» մէջ այս տարուան ձմեռնային դասախօսութեանց շարքը տրուած է Փրոֆ. Ս. Բ. Հարլոյի կողմանէ, ընդհանուր նիւթ ունենալով «Մարդկային Զարգացումի» Հոգևոր Մեկնութիւն»ը:

ՊէՅԼԱՆԻ մէջ ծերունակարդ Տոքթ. Եսպ. Պէզճեան և Տիկինը Նոր Տարիի առթիւ իրենց տունը նուիրած են տեղւոյն Հայ Աւետ. Եկեղեցիին: Միացեալ վարժարանի աշակերտութեան կողմանէ վարդանանց տօնին առթիւ հանդէս — ներկայացում մը տրուած է:

ՍՈՒՐԻՈՅ ԵՒ ԼԻԲԱՆՍԻ Հայ Աւետ. Միութեան տարեկան ժողովը այս տարի պիտի գումարուի Հալէպ, ուր առաջին նիստը տեղի պիտի ունենայ Ապրիլ Տի առաւելուն ժամը Տիին:

ԵՒՐՈՊԱՅԻ Կիրակնօրեայ Դպրոցներու մէկ Համաժողովը տեղի պիտի ունենայ Պուտաբէշթի մէջ Օգոստ. 11—16 ին: Սուրբոյ Հայ Կիր. Դպրոցներն ալ հրաւիրուած են մասնակցելու:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎ. ՎԵՀ. Տ. Սահակ Կաթողիկոս Առաջնորդարաններու զրկած իր մէկ Կոնդակովը հաղորդած է թէ մօտ օրէն ժողով մը պիտի գումարուի մասնակցութեամբ թեմակալ Եպիսկոպոսներու, Տ. Բաբգէն Սրբազանի, Շահէ Մայր. Վրդ. Ի. և Վեհ. Հայրապետէն նշանակուելիք կարող ազգայիններու: Կոնդակին կցուած է 26 յօդուածներէ բաղկացեալ հարցարան մը, որ կը շօշափէ Առաջնորդարանի, ժողովուրդի, դպրոցի, շէնքերու և բարեկարգութեան (այսինքն վարչութեան, ժամակարգի, եկեղեցականներու պատրաստութեան և վարձատրութեան, մարդորսութեան, բեմերուն և կաթ. Աթոռի յարարերութեան) վերաբերեալ խնդիրները:

ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՄԷՋ, Պէյրութ, Բարձր Գումարութեան կողմանէ ձեռնարկուած Հայ զիւղի մը շինութիւնները աւարտած են, ուր սկսած են փոխադրուիլ Նահր Պէյրութի մօտ բնակող Հայ գաղթականները: Ասոնց ծախքը զրկուած է արտասահմանի Հայերուն կողմանէ Ազգ. Դաշնակցութեան միջոցաւ (Լա Սիրի):

ԹՈՒՐԻՈՅ ՄԷՋ ՀԱՅԵՐՈՒ ԹԻԻԸ 65500 կը հաշուի, որուն 50000 Կ. Պուտ. մէջ:

ՊԵԼՃ ԵՐԳՉԱՌՈՒՄԲ ՄԸ, (40 անգամներէ բաղկացեալ) հայերէն պատարագը անխալ երգած է Նամիւրի, Անվէրսի և Պրիւսէի մէջ 2000 է աւելի Պելճերու և Հայերու ներկայութեան:

ՀԱԶԱՐԱՊԵՏ Զ. ԽԱՆԶԱՏԵԱՆ, ֆրանսական նաւատորմի սպաներէն, որ մեծ հռչակ ստացաւ բոլորէն զնահատուած իր տնտեսական քարտէսներուն համար, Թուրուզի Պէյր. Մուհամմէտ էլ Հա-

պիպի կողմանէ արաբական իֆթիխար շքանշով պատուած է իր պատրաստած Ալճերիոյ աղլասին արաբական ուսումնասիրութեանց քարտէսներուն համար:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԿԱՃԱՌԸ հանդուցեալ Պօղոս Նուպար Փաշայի մահով թափուր մնացած աթուին համար միաձայնութեամբ անդամ ընտրած է, բնագիտական և չափագիտական բաժնին մէջ, Տօքթ. Արմենակ Աղատեանը, որ շտա մը գիտական երկերէ զատ հէզինակած է եռահատոր գիրք մը «Եգիպտոսի Ջուրերը» խորագրով:

ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ Հ. Կ. Խաչին և ժողովուրդին միջև ատենագրութեան և հաշուհաշուութեանց խնդիր մը «Վզազրգուռած մթնոլորտ» մը ստեղծած է:

ՊՈԽԼԿԱՐԻՈՅ ՄԷՋ Հայերու թիւն է 35000, 10 քաղաքներու ազգային

վարժարաններու մէջ կան 2000 աշակերտներ: Ասոնցմէ զատ կայ Սոփիայի մէջ Մեսրոպեան Ճեմարանը 9 տարուան զասնընթացքով և Ֆիլիպէի մէջ՝ Մխիթարեան Վարժարանը:

ՍՈՒՐԻՈՅ ՅՈՅՆ ՕՐԹՈՏՈՒՄ Եկեղեցին դժուար կացութեան մը մէջ կը գտնուի: Թափուր մնացած պատրիարքական աթուին համար միեւնոյն ատեն թէ Դամասկոսի մէջ, աշխարհականներէ և կարգ մը եկեղեցականներէ կազմուած ժողովի մը մէջ, և թէ՛ միայն եկեղեցականներէ բաղկացեալ ժողովի մի կողմանէ երկու տարբեր եպոսկոպոսներ պատրիարք ընտրուած են: Վէճը սուր հանգամանք մ'առած է, զոր լուծելու համար Տրապիզոնի նախկին Մետրապոլիտ Գեր. Խրիսանթոսի լիազօրութիւն տրուած է Տիեզերական պատրիարքի կողմանէ:

ՏԻԱՐ ԵՒ ՏԻԿ. ԱՏԱՄՆԱԲՈՅԺ ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Կը փափաքին յայտնել իրենց բոլոր պարագաներուն, ծանօթներուն և բարեկամներուն թէ մօտ օրէն Հալէպէն պիտի մեկնին գէպի Ամերիկա, ուր մէկ տարի մնալէ ետքը թէպէտ կը խորհին Սուրիա վերադարձալ, իրենց մտքին մէջ նկատի ունին նաեւ վերջնականապէս Ամերիկա հաստատուելու հաւանականութիւնը: Բայց ասիկայ կտրելի պիտի ըլլայ որոշել Ամերիկա հասնելէն ետքը միայն:

Հալէպէ մեկնելէ առաջ բարեկամներու և ծանօթներու այցելութիւնները պիտի ընդունին՝ Ապրիլ 5էն, Զատիկի առաջին օրէն սկսեալ մինչեւ Ապրիլ

13, Նոր Կիրակի տեւող շաբթուան միջոցին, զոր մասնաւորապէս կը խընդրուի նկատի առնել: Ապրիլ 13էն մինչեւ Ապրիլ 17 Ուրբաթ իրիկունը անոնք պիտի զբաղին իրենց անձնական գործերը կարգադրելով: Ապրիլ 18ին, Շաբաթ առտուն, եթէ Տէրը կամի, մտադիր են Պէյրութ մեկնիլ, ուսկից Գահիրէ պիտի ճամբորդեն Մայիսի մէկ մասը իրենց գուտարին Տիկ. Էմիլիա Իշխանեանի քովը անցնելու համար: Ապա Պէյրութ պիտի վերադառնան, ուսկից Մայիս 20ին գէպի Նոր Աշխարհ պիտի մեկնին Պայրըն Լայնի Էսիսըն շոգենաւով:

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՍԻՐԱՀԱՐՆԵՐՈՒՆ

Կարգացէ՛ք ՓԻԼՍՐՏՈՆ ՆԱԾԸ, ԿԻԼԻ-
կեհայ ճոխութեան բուն հիմնադիրը.
հեղինակութիւն ԿՈՄՄԱԴԵՆԱՑԻԻ, լոյս
տեսած «Տպարան Գոլէճ»է Հալէպ, էջ
95+ԺԶ., գինն է 10 ֆրանկ: Այս
պատմական երկասիրութեան մասին
Զյոն Վրդ. Տէր Յակոբեան կը գրէ «Ար-
ոն»-ի մէջ 1931 թիւ 1, էջ 26-27. —

«Պատմական նորագոյն ուսումնասի-
րութիւն մըն է սոս, առ հասարակ լաւ
չճանչցուած մեծ հայու մը կատարած
գործին ու անձին շուրջ, որ իբր «Կիլի-
կեհայ ճոխութեան բուն հիմնադիրը . . .
իւր մարեկէն ետքն ալ հոռեւէն . . . այն
չափ երկար վերջալոյս մը ձգող լուսաւո-
րը՝ յայտնի է թէ չի կրնար ստուպ մը
համարուիլ»

Կոմագենացին կը կարծենք թէ հա-
սած է իւր նպատակին, ձեռնհասօրէն

ներկայացուցած ըլլալով այն անձնաւո-
րութիւնը, որուն շուրջ՝ հին և նոր,
հայ թէ օտար, (թիւրք, յոյն, անգլ.
ֆրանս.) աղբիւրները գիրար հակասող
ծանօթութիւններ ալ կուտան ստէպ:
Անոնցմէ բխած լոյսը չափով մը պայծա-
ռացած կ'երեւի դէմքերն ու դէպքերը
չիտակ հասկնալու համար ընթերցողնե-
րու եւ մանաւանդ հեղինակներու վրայ
փնտռուած մտքի այն կարողութեամբ,
զոր դասում կը կոչենք:»

.

«Փիլարտոս Հայը» նպաստ մըն է հայ
պատմութեան և բանասիրութեան: Ա-
նոր հեղինակէն ասկէ ետք նոր ուսում-
նասիրութիւններ կարգալը օգտակար ու
հաճելի կը համարենք:»

Դիմել զայն ստանալու համար
«Տպարան Գոլէճ» B. P. 287 Alep, Syrie.

«ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ» ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

մէկ տարուան համար

Մի ոմն Հալէպէն

Միսակ Մնչեբեանի, ՍանփաՎլիօ, Պրագիլ

Միհրան Լափոյեանի, ՍանփաՎլիօ Պրագիլ:

Տիար Յովսէփ Զէրչեան՝ Հալէպէ

Տիար Կարապէտ Աբոեանի,

Լոս Անկէլէս, Գալիֆոռնիա,

Haig Brothers, Նիւ Հէյվըն, Մ. Ն.,

صاحب الامتياز والمدير المشغول القسم ق. هاروتونيان

NOR AVEDAPER

BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ ԳՈԼԷՃ ՀԱԼԷՊ